բապետին։ Երկիրը խաղաղեց։

Խառնակ դրութիւնից օգտուելով անձնական հաշիւներ էին յարդարում իրար յաջորդող կուսակալները եւ քաղաքապետները։ Հիւսիսային անհանգիստ հարեւանները Խաղարները եւ Ծանարք եւս գլուխ բարձրացրին եւ պատեհ առիթ համարեցին հարաւ սուրալու աւարառութեան նպատակով։

Այս պայմաններում, երբ խալիֆի մտահոգութիւնը կենտրոնացած էր այլուր, Աշոտ եւ Շապուհ կարող էին հարուածել մուսուլման Զահապին, առանց վախենալու խալիֆի բարկութիւնից։

Ռաշիդի մահից յետոյ ծագեցին զահակալական աղմուկներ։ Նրա ցանկութիւնն էր՝ բաժանել պետութիւնը երեք որդիների մէջ։ Սակայն, Ամին, որ ծնուած էր իշխանուհի մօրից, յաջողեց գրաւել զահը (809–813)։ Մամուն սպաննեց նրան եւ խլեց իշխանութիւնը։ Նոր խռովութեանց դուռն բացուեց։

Նոր զահակալը Հայաստանի եւ Ատրպատականի կուսակալութիւնը յանձնեց Տահիր իբն Մուհամմատ աս Սանանի։ Այդ ժամանակ Հայաստանում կուսակալ էր Իսհակ իբն Սոլիման ալ Հարաշի, նշանակուած սպաննուած ամիրապետի կողմից։ Սա չանսաց նոր խալիֆի հրամանին եւ չուզեց զիջանել երկիրը նորեկ կուսակալին։ Կուսակցական յուզումներ բարձրացան նոր եւ հին խալիֆի, նոր եւ հին կուսակալի անունների շուրջը։

Տահիր աս Սանանի Ատրպատականի Վարդանակերտ (= արաբ՝ Վարթան) քաղաքը ժամանելով, բանակցութեան մէջ մտաւ հայ ըսպարապետների եւ իշխանների հետ, եւ սրանք ընդունեցին Մամունի իշխանութիւնը։

Խօսքը Աշոտի եւ Շապուհի մասին է։

Սրանց հակառակ, Իսհակ Բ. Սոլիմանի կողմը բռնեցին այն քաղաքները որ աղանդաւոր Առա ալ Մոկաննայի առաջնորդութեամբ ապստամբել էին խալիֆի դէմ եւ ամենից առաջ Բայլականը։ Իսհակի կուսակից յայտարարեցին իրենք իրենց նաեւ Ներսեհ եւ Արդ ալ Ռահման տեղական իշխանները։

Ոստիկանական մայրաքաղաք Պարտաւ Տահիրի կողմն էր։ Ուստի Իսհակ Բ. Սոլիմանը յարձակուեց Պարտաւի վրայ, բայց պարտուեց Տահիրի ղրկած զօրքերից եւ փախաւ, թողնելով իր որդուն գերի թշնամու ձեռքին։

Ահա այս ժամանակ է, որ Տահիրի դէմ դուրս եկաւ Արդ ալ Մելիք ալ Զահաֆի, որ ոչ այլ ոք է, եթէ ոչ որդի մեզ արդէն ծանօթ Զահապ իշխանի, հակառակորդի Աշոտի եւ Շապուհի։

Բայլականցիք՝ քաջալերուած՝ արշաւեցին Պարտաւի վրայ եւ պաշարեցին այնտեղ Տահիրին։ Շուտով օգնութիւն հասաւ ամիրապետից, Տահիր ազատուեց։ Ինչ որ զարմանալի է, Արդալ Մելիք ալ Զահաֆի պատիժ չկրեց իր ըմբոստութեան համար, այլ ներման արժանացաւ։ Կարգը վերահաստատուեց երկրի մէջ։

* * *

Այս թանկագին տեղեկութիւնները, որ պարտական ենք նոյն արաբ Եակուբի մատենագրին, լոյս են սփռում Վարդան պատմիչի հակիրճ խօսքի վերայ, որ քաղուած է Շապուհ Բագրատունու, անցքերին ժամանակակից հեղինակի, պատմական երկից. «Իսկ Զահապն ապստամբեալ յիւրմէ իշխանէն դայ նստի ի Դուին բռնութեամբ որդւով իւրով Արդայիւ»։

Քիչ յետոյ պատմագիրը դառնալով Զահապին հաղորդում է, որ Զահապի տունը զօրացաւ Դուինում այնքան, որ հինգ հազար զօրքով կամեցաւ գնալ Տարօնի վրայ, որ պատկանում էր Աշոտ իշխանին, այսինքն՝ Մոակերին։ «Ողջախոհ եւ քաջ» Աշոտ առանց սպասելու զօրքերի հաւաքման, երկու հարիւր ձիաւոր եւ երեք հարիւր հետեւակ մարդով յարձակուեց Զահապի որդու վրայ, կոտորեց նրա զօրքերից երեք հազար հոգի եւ աւարի տուաւ բանակը։ Միեւնոյն ժամանակ Շապուհ, Աշոտի եղբայրը, ասպատակեց Դուինի կողմերը եւ աւարով դարձաւ։ Այն ինչ քաղաքից դուրս են գալիս զօրքերը հետապնդելու Շապուհին, քաղաքացիք յարձակւում են Արդ ալ Մելիքի վրայ եւ սպանում։ Լքուած զօրքերը ցրւում են։

Զահապ իշխանը հաստատուած էր Ապահունիք։ Մամունի դահակալութեան առթիւ ծագած կուսակալական հակառակութիւններից օգտուելով՝ Զահապի որդին՝ Արդ ալ Մելիք ձեռք էր դրել Դուինի վրայ, կամենալով ապա-